

Առաջարկներ հաշմանդամություն ունեցող կանանց խնդիրները լուսաբանելու համար

- Անդրադարձեք այն հոգեբանական խնդիրներին, որ ունենում են հաշմանդամություն ունեցող աղջիկները և կանայք իրենց ընտանիքում:
- Կոտրեք այն կարծրատիպերը, ըստ որոնց նրանք չեն կարող լավ կին կամ հոգատար մայր դառնալ, տնային հոգսերը հոգալ, հմայիչ կամ սեքսուալ լինել և այլն:
- Ներկայացրեք հաշմանդամություն ունեցող կանանց հաջողված պատմություններ, որոնք առնչվում են կյանքի տարբեր ոլորտներին, ներկայացրեք նրանց որպես հաջողակ մասնագետների կամ աշխատակիցների:
- Հիշեք նրանց մասին ամեն անգամ, երբ խոսում են կանանց համար պետական ծրագրերի մասին:
- Անդրադարձեք հաշմանդամություն ունեցող կանանց սեռական և վերաարտադրողական առողջությանը, առողջապահական հաստատությունների և ծառայությունների մատչելիությանը:
- Խոսեք նրանց մայրանալու և ծնողավարության իրավունքի մասին: Ցույց տվեք դրական օրինակներ և հաղորդեք պրակտիկ տեղեկություններ:
- Մի խուսափեք նրանց հետ խոսել սիրո, ընտանիքի, գեղեցկության և այն թեմաներից, որոնց մասին սովորաբար խոսում եք մյուս կանանց հետ:
- Հատուկ ուշադրություն դարձրեք նրանց կրթության և մասնագիտություն ստանալու հնարավորություններին և խնդիրներին:
- Անդրադարձեք հատուկ հաստատություններում գտնվող աղջիկների և կանանց իրավունքներին:
- Անդրադարձեք ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնության ենթարկված կանանց խնդիրներին, խոսեք դրանց պատճառների մասին:

Հետաքրքրվեք՝

- արդյո՞ք կանայք հաճախում են իրենց բնակավայրին մոտ գտնվող ուսումնական, բժշկական, մշակութային հաստատություն, համայնքային կենտրոն և այլն,
- ստանո՞ւմ են արդյոք բավարար և մատչելի տեղեկատվություն իրենց հետաքրքրող հարցերի, ծրագրերի մասին,
- կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ներն իրենց ծրագրերում ներառե՞լ են արդյոք հաշմանդամություն ունեցող կանանց:

Չարուհի Բաթոյան